

ԾԻԱԽՈՏՏ  
ՀԵՎԱՆԴԱՒԹՅՈՒՆՆԵՐՆ  
ՈՒ ՎՆԱՍՈՒՆԵՐԸ

ՀԽՈՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՃԵՐԵՎԱՆ

1938

633  
9-95

04 AUG 2010

633  
9.95 *wf*

ԾԽԱԽՈՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ  
ՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Կազմեցին՝ Ա. Գ. Գրիգորյան  
Ա. Գ. Հակոբյան

ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1938

ԱՍԾԻԿՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծխախոտը, ինչպես և մյուս գյուղատնտեսական կուլտուրաները, միշտ յենթակա յեն զանազան հիվանդությունների, վորոնք վնաս են հասցնում բույսերին։ Ծխախոտի հիվանդությունները յերկում են նրա աճման տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես սածիւլանոցում նրա մատաղ հասակում, այնպես ել դաշտում, չորանոցում, պահեստներում, պահպանման և ֆերմենտացիայի ժամանակ։ Պետք են նշել, վոր ձիախոտի հիվանդությունները բացասական ազդեցություն են ունենում նրա թե՛ վորակի և թե՛ քանակի վրա։ Ճիշտ ե, աղբոտեխնիկական ձեռնարկումների միջոցով մեր կոլտնտեսություններն ու խորհանտեսությունները տարեցտարի բարձրացնում են ծխախոտի բերքատվությունն ու հումույթի վորակը, բայց պետք են նշել, վոր աղբոտեխնիկական ձեռնարկումներին զուգընթաց անհրաժեշտ և լուրջ պայքար չեն մղել նաև ծխախոտի հիվանդությունների ու վնասատունների դեմ, վորոնք մեծ կորուստներ են պատճառում ծխախոտի բերքին և իջեցնում են նրա վորակը։ Ծխախոտի բույսի հիմնական հումույթը նրա տերևն է, վորը և բոլոր հիվանդությունների դեպքում յենթակա յել լինում վնասաման։ Խորհանտեսությունների և կոլտնտեսությունների պայմաններում, վորոնք արտադրական խոշոր միավորներ են հանդիսանում, բույսի հիվանդությունների դեմ պայքարելու մեծ հնարավորություններ կան։ Մասնավորապես խիստ կարևոր ե սածիւլանոցի հիվանդությունների դեմ պայքարելը, քանի վոր սածիւլանոցները հանդիսանում են



3036

38

այն աղբյուրը, վորտեղից հիվանդությունները տառածվում են ծխախոտի դաշտերում։ Սոցիալիստական գյուղանտեսության մեխանիզմացիայի միջոցով հարավոր ե և պետք է իրական պայքար մղենք բարձր բերքատվության և բարձրորակ բերք ստանալու համար, կիրառելով կուսակցության կողմից առաջադրված ինդիրները՝ բերքատվության և վորակի բարձրացման ուղղությամբ։ Մենք կարող ենք և պետք ե լուրջ պայքար մղենք ծխախոտի հիվանդությունների դեմ, վորպեսզի ստանանք լավորակ և բարձր բերք, վորպեսզի հնարավոր լինի արտադրությունը բավարարել բարձրորակ հումուլյթով, հաշվի առնելով սպառողի պահանջները։

### ԾԽԱԽՈՏԻ ՀԻՎԱՆԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Բույսերի և մասնավորապես ծխախոտի հիվանդություններն առաջանում են մի շարք պատճառներից։ Ծխախոտի հիվանդություններն առաջանում են զանազան տեսակի միկրոռդանիզմներից, ինչպես որինակ՝ սունկերը, բակտերիաները և այլն։ Բացի սրանից, կան մի շարք ուրիշ պատճառներ ևս, որինակ՝ չափից ավելի խոնավությունը, լույսի սակալությունը, արեգակային այրվածքները և այլն։ Այս հիվանդությունները բույսերի վրա կարող են լինել առանձին-առանձին և իրենց արտաքին տեսքով իրարից տարբերվում են, իսկ յեթե ջերմության և խոնավության լավ պայմաններ են ստեղծվում, այս հիվանդությունները կարող են իրար հաջորդել։

Ինչպես հայտնի յե, ծխախոտը լինում է տարբեր սորտերի, տարբեր տեսակների, վորովհետեւ նա աճում և մշակվում է տարբեր հողային և կլիմայական պայմաններում։ Հիվանդությունները զանազան տեսակի ծխախոտերի վրա միշտ միանման չեն լինում, հետևապես և պայքարն այդ հիվանդությունների դեմ լինում է տարբեր ձևերով։ Ծխախոտի այս կամ

հիվանդությունը մի տեղ կարող է արտահայտվել շատ ուժեղ, մի ուրիշ տեղ շատ թույլ, կամ բոլորովին կարող է բացակայել։ Հիվանդությունները, վորոնց մասին մենք հետազայտմ կխոսենք, առաջանում են սունկերի և բակտերիաների միջոցով, վորոնք տեղավորվում են բուսական հյուսվածքների մեջ։ Այս բակտերիաները կամ սունկերը, վորոնք կենդանի որդանիզմին վնաս են հասցնում, կոչվում են պարագիտներ, նրանք առաջացնում են տարբեր տեսակի հիվանդություններ։ Սունկերի և բակտերիաների առաջացրած հիվանդությունները վարակիչ են, մեկ բույսից կարող են անցնել մյուսին և այդպիսով վարակը տարածել ամբողջ գաշտում։ Սունկերը և բակտերիաները կարող են լինել հողում, վորտեղից և, բարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ, անցնում են բույսի հյուսվածքի մեջ։ Գոյություն ունի նաև հիվանդությունների այնպիսի խումբ, վորը վնասում և վոչ պարագիտների միջոցով։ Դրանք պարագիտային հիվանդություններ չեն, այլ առաջանում են հողային և կլիմայական աննպաստ պայմանների հետևանքով։ Պարզ ե, վոր այսպիսի հիվանդությունների դեմ պայքարի ձևը այլ է, քան վարակիչ հիվանդությունների ժամանակ։ Հիվանդությունները լինում են նաև ծխախոտի չորացման, ֆերմենտացիայի և պահպանման ժամանակ։ Այստեղ հիվանդությունների առաջացման պատճառ կարող են լինել սունկերը, բայց սրանք պարագիտներ չեն, քանի վոր սրանք ապրում են վոչ թև կենդանի որգանիզմի վրա, այլ մեռած նյութերի վրա։ Յերկար տարիների փորձերից պարզվել ե, վոր ծխախոտի գաշտերում յերեացող հիվանդությունները մեծ մասամբ սկիզբ են առնում սածիլանոցներից։ Հենց այս պատճառով ել այդ հիվանդությունների տարածման առաջն առնելու համար պետք է սածիլանոցներում ձեռնարկել կանխիչ միջոցներ, իսկ յեթե, այնուամենայնիվ, հիվանդությունն սկսվեց, պետք է հենց սկզբից ուժեղ պայքար սկսել հենց սածիլա-

նոցներում։ Հետեապես առողջ սածիլ աճեցնելու գործը պետք է դառնա ծխախոտի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարելու աշխատանքի ամենակարեւոր ողակներից մեկը։ Թե ինչ միջոցներով պետք է կանխել սածիլանոցներում հիվանդությունների տարածումը, այդ մասին սույն գրքույկում մանրամասն կանգ չենք առնի, քանի վոր այդ հարցին նվիրված կան հատուկ գրականություն, հրահանդներ և այլն։

Այժմ անցնենք առանձին-առանձին հիվանդություններին, վորոնք լինում են ծխախոտի սածիլանոցներում և մեծ վնասներ են պատճառում ինչպես սածիլային տնտեսությանը, այնպես ել ծխախոտի դաշտերին։

### ԱՐՄԱՏԱՎԻՆ ՓՏԱԼԱՏ (ԿՈՐՆԵՎԱՅԱ ԳՆԻԼ.)

Այս հիվանդությունն առաջանում է սունկերի միջոցով, վորոնք բույսի արմատների մեջ աստիճանաբար զարդանարով առաջացնում են փտում, բույսի արժատային կառուցվածքի և արմատային ձևի խախտում ու արմատների սեղացում։ Արմատների հիվանդության ժամանակ, սննդի և ջրի պակասության պատճառով, բույսը դանդաղ և զարդարում և մասնամբ ել վոչնչանում է։ Այդպիսի բույսը հողից դուրս քոշելու-հանելու ժամանակ արմատները սովորականից չուտ են դուրս դալիս և անմիջապես նկատվում ե արմատների սեղացումը։ Այս հիվանդությամբ վարակվում են բոլոր հասակի ծխախոտի բույսերը, բայց պետք են նշել, վոր այս հիվանդությունը ամենից շատ տարածված է ջերմոցներում և զգալի վնաս է հասցնում ջերմոցային սածիլներին։ Արմատափտախտով վարակված սածիլները դաշտ փոխադրելուց հետո հիվանդությունն արտահայտվում է տարբեր չափի։ Ուժեղ կերպով վարակված սածիլները դաշտում շատ դանդաղ են աճում, սկսում են թառա-

մել, ապա դեղնում են և աստիճանաբար չորանում, վոչնչանում։ Թեթև վարակված սածիլներն աճում են դանդաղ և ուշ են հասունանում, բայց չեն վոչնչանում։ Այս հիվանդության ուժեղ կամ թույլ տարածվելը կախված է նաև հողային պայմաններից, որինակ՝ ծանր և խիտ հողում (ծանր կավահողեր, սեղահողեր, թեթև ավազահողեր և այլն) այս հիվանդությունը շատ ուժեղ է տարածվում և, ընդհակառակը, թեթև ու լավ փափկեցրած հողերն այս հիվանդությամբ վարակված սածիլներից թեկուղ ուշ, բայց բավարար բերք են տալիս։ Այս հիվանդությունն ուժեղ տարածվում է ամառվա առաջին ամիսներին, յերբ լինում են անձրևներ, հետեւապես և խոնավության բարձր աստիճան է լինում։ Տաք յեղանակներին արմատափտախտն այնքան ել ուժեղ չի տարածվում, քանի վոր ջերմությունը խանդարում է սունկերի արագ զարգացմանը։ Հողում սունկերը մնում են 4-5 տարի։


Այս հիվանդությունից բույսը պաշտպանելու համար պետք է դիմել հետեւյալ միջոցներին։ Հատուկ բովիչներով պետք է սածիլանոցի հողը բռվել։ Դրա համար պետք է վերցնել սածիլանոցի, ջերմոցի կամ մարգի հողի վերին չերտը 10 սանտիմետր խորությամբ և տաքացնել բռվիչների մեջ՝ Յելսիուսի 100° ջերմաստիճանի տակ պահելով 1-ից մինչև  $1\frac{1}{2}$  ժամ։ Հողը պետք է բռվել ցանքից մի քանի որ առաջ։ Հողի բռվելն այն նշանակությունն ունի, վոր 100° ջերմությունից նրա մեջ յեղած բակտերիաներն ու սունկերը վոչնչանում են։ Բացի այդ, հիվանդությունը կանխելու համար ջերմոցային բոլոր գործիքները պետք ե տիստահանել ֆորմալինով։ Արմատային փտախտի զարգացմանը նպաստում է նաև գերիխոնավությունը, չափից ավելի ջրելը, շատ խիտ ցանքը։ Ջերմոցները պետք ե շատ հարթ լինեն, վորովհետեւ յերբ թեթև լինում, ջրելիս ջուրը կուտակվում է ներքեւ մա-

սում և այնտեղ գերխոնավություն առաջանալու հետեւանքով այս հիվանդությունն սկսում է զարգանալ ու տարձավել ամբողջ սածիլանոցում։ Յերբ ջերմոցներում արմատափտախտ է յերեռամ, պետք է անմիա ջապես վարակված սածիլները վոչնչացնել և այդ հո-



Նկ. 1ա.

Առողջ սածիլ



Նկ. 1բ.

Արմատափտախտով  
վարակված սածիլ

Դամասը ջրել յեռման ջրով ու 10 սանտիմետր հաստությամբ հողաշերտը հեռացնել։

Հիվանդության ոջախները վոչնչացնելու համար կարելի յենակ շաղ տալ պղնձարձասպի 80/0-այլին լուծույթ։ Այս լուծույթն այնպես պետք է շաղ տալ, վոր առողջ սածիլների վրա չթափիլ։

Այն հողամասերում, վորոնք վարակված են յեղել արմատային փտախտով, հետևյալ տարին պետք է ցանել ցորեն կամ յեղիպտացորեն, քանի վոր այդ հողամասը ծխախոտի համար հանդիսանում է վարակված և կարող ենորից արմատափտախտով վարակել ծխախոտի սածիլը կամ բույսը։

### ՍԱԾԻԼՅԻՆ ԱԽՏ

Սածիլային ախտ հիվանդությունը նույնպես առաջնում էն սունկերը. այդ հիվանդության ժամանակ բույսի ցողունի վրա, հողի մակերեսից մի քիչ վերև, առաջանում է փտում, վորը շատ արագ կերպով տարածվում է ամբողջ բույսի վրա, իսկ հետագայում վարակը տարածվում է ամբողջ ջերմոցում։ Վարակված սածիլների գույնը լինում է գորշավուն կամ հաճախ կեղտոտ շագանակագույնի։ Սածիլի փտումը կատարվում է սունկերի միջոցով։ Այդ սունկերը մնում էն հողի և բույսի մնացորդների մեջ և ամեն տարի առաջացնում էն սածիլային ախտ հիվանդություն։ Այս հիվանդությունը վտանգավոր է նրանով, վոր յենթակա չեն բուժման, ուստի հիվանդությունը կանխելու համար պետք է ձեռք առնել նախնական կանխիչ միջոցներ և հիվանդության դեմ պայքարն սկսել ջերմոցների կազմակերպման հենց սկզբնական շրջանից։ Պայքարի մեթոդներն են։

1. Ջերմոցները պետք է կազմակերպել ծխախոտի չորանոցներից հեռու։

2. Ջերմոցների համար պատրաստվելիք հողը մաքրել ամեն տսեակ բուսական մնացորդներից, նրա մեջ չթողնել ցողունների և տերևների մնացորդներ։

3. Վոչնչացնել հողի մեջ յեղած բակտերիաները և սունկերը՝ հողն ախտահանելու միջոցով։ Դրա համար յուրաքնայուր կալանտեսություն պարտավոր եռնենալ թիթեղյա բովիչ, վորի մեջ ջերմոցային հողի վերնաշերտը 10 սանտիմետր հաստությամբ պետք է բովիլ, վորպեսզի այդ հողի մեջ յեղած բակտերիաներն ու սունկերը միանգամայն վոչնչանան։ Զերմոցների ու մարգերի հողի բովումը կատարվում է 100° ջերմուսի ջերմաստիճանի տակ՝ բովիչի վրա, առնվազն  $1\frac{1}{2}$  ժամ տեղուղությամբ, իսկ բոված տաք հողը տեղափոխվում է սածիլանոց։ Հողն անպայմանորեն պետք է բովիլ ցանքը կատարելուց մի քանի որ առաջ։

Այս հիվանդության տարածմանը նպաստում է նաև խոնավությունը, չափից դուրս ջրելը, խիտ ցանքը և այլն։ Յերբ ջերմոցներում այդ հիվանդությունը յերեսում է, անմիջապես պետք է վարակված սածիլները վոչնչացնել, վարակված հղումասի վրա չաղ տալ յեռացրած ջուր և 10 սանտիմետր հաստությամբ հողաշերտը հեռացնել։ Հիվանդության դեմ կարելի յե պայքարել նաև սղղնձարջասպի 3 տոկոսային լուծույթով։ Այս լուծույթը պետք է շաղ տալ վարակված հողամասի հիվանդ շիթիների վրա այնպես, վոր առողջ սածիլների վրա չթափիի։ Կարելի յե նաև վարակված ոջախի վրա չաղ տալ ֆորմալին՝ հետեւյալ կերպ։ 1 լիտր ֆորմալինը 12 լիտր ջրի հետ խառնելով շաղ տալ մեկ քառակուսի մետր տարածության վրա։ Ապակեծածկ ջերմոցների համար այս մեթոդը կիրառելի չէ, քանի որ սածիլները կարող են փշանալ։ Վարակված հողամասի վրա կարելի յե նաև ցանել ծծմբափոշի։ Վարակված ոջախների վերացումից հետո պետք է ձեռնարկել ապահովիչ միջոցներ, վորպեսզի սածիլները նորից չհիվանդանան։ Դրա համար պետք է ջերմոցները լավ խնամել, հաճախ պետք է շրջանակները բարձրացնել, վորպեսզի ողափոխություն կատարվի և, յեթե ջերմոցում խոնավությունը շատ է, վորպեսզի վերին շերտը չորանա։ Յեթե ջերմոցում

խոնավության աստիճանը շատ է բարձր, պետք է ժամանակավորապես ջրելը դադարեցնել։ Հիվանդությունից դերձ պահելու համար պետք է ջերմոցները սրսկել  $10/0$ -ային բորդոյան հեղուկով։



Նկ. 2.

Սածիլային փափախով վարակված սածիլ

### ԲԱԿՏԵՐԱՅԻՆ ԶԵԶՈՑՈՒԹՅՈՒՆ (ՌՅԱԲՌՈՒԽԱԱ)

Այս հիվանդությունն ամենից շատ վարակիչ և ամենից արագ տարածվողն է և շատ վտանգավոր է ծխախոտի համար։ Այս հիվանդության նշանները հետեւյալն են. ծխախոտի տերեկի վրա դոյանում են նախ դեղնագույն բծեր, վորոնք հետո ուժեղ չափով տարածվելով տերեկի վրա՝ առաջացնում են գորշ բծեր։ Այս հիվանդությունը բակտերիաների միջոցով արագորեն տարածվում է անձրևային և քամի յեղանակներին և վարակում է մյուս բույսերին։ Այս հիվանդությունը վարակելով ամբողջ տերեկը, մեծ վնասներ

Ե հասցնում ծխախոտին: Հիվանդություն առաջացնող բակտերիաները մի քանի տարի մնում են բույսերի մնացորդների մեջ և անցնում ջերմոցներին, այնտեղից էլ ծխախոտի դաշտը:

Պայքարի միջոցներն են:



Նկ. 3.  
Չեչոտությամբ հիվանդ տերէ

Ջերմոցները հիմնել չորանոցներից հեռու, ջերմոցների շրջանակները, խսիրները և այլն չպահել այստեղ, վորտեղ չորացվում է ծխախոտը: Բերքահավաքից անմիջապես հետո վոչնչացնել բույսերի մնացորդները, այդ թվում և սածիլների մնացորդները:

Յեթե սածիլանոցներում հայտարերվում է բակտերային չեչոտություն հիվանդությունը, ապա պետք է ինչպես ջերմոցները, այնպես ել նրա բոլոր մասերը (շրջանակները, ապակիները և այլն) լվանալ Փորմավնի լուծույթով՝ հետևյալ հարաբերությամբ. 1 մաս Փորմալին և 25 մաս ջուր, հողն ախտահանել բովիչների միջոցով, այնպես, ինչպես սածիլային փտախտ հիվանդության դեպքում. հինգ որը մեկ անգամ ջերմոցները սրսկել 1 տոկոսային բորոդյան հեղուկով:

Բակտերային չեչոտությունը կարող է առաջանալ ինչպես ջերմոցներում, այնպես ել զաշտում, յեթե նրա զարգացման համար բարենպաստ պայմաններ լինեն (հողի և ողի խոնավություն):

Ջերմոցներում և սածիլանոցներում բակտերային չեչոտություն հիվանդություն հայտարերելու դեպքում տվյալ հողամասի հիվանդության ոջախը պետք է անմիջապես վոչնչացնել, այսինքն՝ հիվանդացած սածիլները քանդել և այրել, իսկ հողամասը ջրել արջապի լուծույթով՝ հետևյալ հարաբերությամբ՝ 300 գըրամ պղնձարջասպի լուծույթը՝ Կառնելով 12 լիտր ջրի հետ: Միանգամայն արգելվում է հիվանդ սածիլները դաշտ տեղափոխելը: Այս հիվանդությունը տարածվում ենա և մարդկանց միջոցով, յերբ նրանք ձեռք են տալիս հիվանդ սածիլին և առանց ձեռքերը լվանալու կալչում են առողջներին: Բակտերային չեչոտություն հիվանդությունը տարածվում է նաև ծխախոտի սերմերի միջոցով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սերմերն ախտահանման յենթարկել հետևյալ կերպ: Վերցնում են լյալիսի կամ ամինոթթվուտային արծաթի մեկ կշռամասի վրա ավելացնում են 1000 մաս ջուր, որինակ՝ մեկ գրամ ամինոթթվուտային արծաթին պետք

Ե խառնել մեկ լիտր թորած ջուր և ծխախոտի սերմերը փոքրիկ տողրակների մեջ լցնելով՝ իջեցնել լուծույթի մեջ ու պահել 10–15 րոպե։ Ախտահանելուց հետո սերմերը պետք է մաքուր ջրով լվանալ առնվազն 3–5 անգամ, 2–3 րոպեն մեկ անգամ ջուրը փոխելով։ Լվանալուց հետո սերմերը պետք է փոել բարակ չերտով և չորացնել ստվերում, այնպես, վոր արևի ճառագայթները չընկնեն սերմերի վրա։

Չորացնելուց հետո սերմերը կարելի յե ցանել ծլեցրած կամ չոր վիճակում։ Լուծույթը պետք է պատրաստել կավե, եմալե, կամ փայտե ամանի մեջ (բայց վոչ մետաղե)։ Միևնույն լուծույթի մեջ սերմի ախտահանում կարելի յե կատարել վոչ ավելի քան 3 անգամ։

#### ՈՂԱԿԱՎՈՐ ԶԵԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՌՅԱԲՈՒԽԱՆ)



Այս հիվանդության վարակը գտնվում է հիվանդ տերեների հյութի մեջ։ Սրա վարակը շատ դժվար է տարածվում։ Զեչոտությունը տերեւի վրա արտահայտվում է գորշ գույնով, շատ անդամ գորշասպիտակավուն գույնով։ Այս հիվանդությամբ չափից դուրս վարակված տերեները լինում են փոքր, թեթև քաշով և տալիս են շատ վատ վորակ։

Վարակը, ինչպես յերեսում է, պահպանվում է հիվանդ ըսույսերի չորացած մնացորդների մեջ և այդտեղից ել տարածվում է։ Այս հիվանդությունը սերմերի միջոցով է փոխանցվում։

Պայքարի միջոցներն են։ սածիլանցները կազմուելու ծխախոտի չորանցներից մոտավորապես  $\frac{1}{2}$  կիլոմետր հեռու։ Զերմոցային ինվենտարը և գործիքները չափահել այն շենքերում, վորտեղ չօրացվում են ծխախոտը։ Բերքահավաքից հետո վոչնչացնել բույսի մնացորդները։ Վարակված սածիլները դաշտ չփոխադրել։

Բացի սածիլների վերոհիշյալ հիվանդություններից, կան նաև մի շարք հիվանդություններ, վորոնց

առաջացմանը, ինչպես վերևում ասացինք, նպաստում են հողի և ողի գերխոնավությունը, անձրևային յեղանակները, խիտ ցանքը, չափից շատ ջրելը և այլն։



Նկ. 4.

Ողակավոր չեչոտություն

Ծխախոտի մյուս հիվանդությունների մասին կխոսենք սույն դրվուկի «Ծխախոտի հիվանդությունները» բաժնում։

#### ՍԱԾԻՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Սածիլների համար ամենավտանդամոր վնասատուն համարվում է արջուկը (իշախտանչը), վորը մեծ վնասներ է հասցնում սածիլային տնտեսությանը։ Այս

վնասատում ջերմոցներում և մարդերում իր համար սնունդ փնտրելով՝ գետինը փորփում, բարձրացնում է հողի շերտը և մարդերը քանդում, վորով մեծ վնասներ ե հասցնում սածիլներին։ Սածիլանոցում արջուկի դեմ պայքարը պետք է սկսել վաղ գարնանը, մինչև ծխախոտի սերմերի ցանքը։ Ցանքից առաջ պետք է մանր գնդիկների ձեռվ թունավորված գրավչանյութ պատրաստել և ջերմոցների կամ մարդերի մեջ շաղ տալով ծածկել հողով՝ 1-2 սանտիմետր խորությամբ։ Պայքարի այս միջոցը պետք է կրկնել այն ժամանակ, յերբ սածիլանոցներում արջուկը ե յերեսում։ Գրավչանյութը պատրաստվում է մկնդեղից կամ կարելի յե պատրաստել փարիզյան կանաչից, խառներով մանրած յեղիպտացորենի, գարու, կամ քուսպի հետ։ Քուսպից գրավչանյութը պատրաստվում է հետեւյալ կերպ։ Վերցնում են քուսպը և ջրի մեջ յեփում այնքան ժամանակ, վոր նա փափկանա, վորից հետո ջուրը թափում են, քուսպը լավ տրորում, հետը մաս-մաս խառներով փարիզյան կանաչ կամ ֆտորական նատր (աղ), հետեւյալ հարաբերությամբ։ 10 կ. գրամ քուսպին մեկ կիլոգրամ փարիզյան կանաչ կամ ֆտորական նատր։ Մեկ կիլոգրամ գրավչանյութը բավականացնում է 200 ք. մետր սածիլանոց թունավորելու։

Յեղիպտացորենից և գարուց գրավչանյութ պատրաստում են հետեւյալ ձեռվ։ յեղիպտացորենը կամ գարին ջրի մեջ այնքան են յեփում, մինչև վոր փափկում ե, վորից հետո ջուրը թափում են, հատիկները տրորում և անմիջապես ավելացնում են սպիտակ մըկնդեղ կամ փարիզյան կանաչ, հետեւյալ հարաբերությամբ։ 10 կիլոգրամ յեղիպտացորենին կամ գարուն (քանակը հաշվում են մինչև յեփելը) մաս-մաս խառնում են 500 գրամ մկնդեղ կամ 8-ից 900 գրամ փարիզյան կանաչ, վորից հետո պատրաստում են մանր գընդեկներ ու դրանց միջոցով կատարում թունավորումը։ Գրավչանյութի համար գործադրվող նյութերը վտան-

գավոր են մարդու, անասունների ու թռչունների համար, ուստի նրանց հետ պետք է վարվել չափազանց զգուշ և ավելցուկ գրավչանյութերը պետք է թաղել հողի մեջ, իսկ գրավչանյութով թռչունավորված վայրում արդեկել կենդանիների, թռչունների և յերեխաների մուտքը։




Նկ. 5.

Սրջուկ կամ իշխանանչ

### ԽԱՌԻՐԴ (ԿՐՈՑ)

Սածիլանոցների վնասատուներից ե նաև խլուրդը, վորն իր համար սնունդ փնտրելիս ավերում է սածիլանոցները։ Զերմոցները կամ մարդերը սարքելիս աղբի հետ միասին հողն են մտնում նաև զանազան տեսակի վորդեր, մասնավորապես անձրեային ճիճուներ, քանի վոր ջերմոցային խառնուրդը նրանց համար հանդիսանում է ամենալավ սննդի աղբյուրը։ Ահա, հենց այս վորդերին վորսալու համար խլուրդները հողի մակերեսից 4-5 սանտ. ներքեւ ամեն տեսակի անցքեր են բաց անում։ Այդ անցքերը հողի վերևից նայելիս ել յերեսում են, քանի վոր նրանք բարձրացնում են հողը և այդ պատճառով սածիլների արմատները հողից անջատվում են ու թառամում։ Պարզ է, վոր սածիլներն արմատահան լինելով՝ հողից սնունդ վերցնել չեն կարող և մեծ մասը փչանում է։ Խլուրդի դեմ պայքարելու համար կան մի շարք միջոցներ, որինակ խփում, սպանում են բահով, կամ կրակում են և այլն։



Խլուրդի դեմ պայքարելու ամենալավ միջոցը համարվում է հատկապես այդ նպատակով պատրաստված գործիքը։ Այս գործիքը պատրաստվում է հետեւյալ կերպ։ Վերցնում են բահի կոթի հաստությամբ մի փայտ և վրան չորս կողմից հաղցնում ծխախոտի առեղներ, այնպես, վոր ասեղների սուր ծայրերը 10-ից 14 սանտիմետր կոթից դուրս ընկնեն։ Ահա այսպիսի չորս ատամանի գործիքով հարվածում են մարդերի այն տեղը, վորտեղ յերեսում ե խլուրդի աշխատանքը, և նրան վորսալով վոչչացնում են։ Հաշված և հաջող հարվածի ժամանակ հողի հետ միասին դուրս ե գալիս նաև խլուրդը։ Խլուրդը հողից հեռացնելուց հետո պետք ե առաջացած փոսում նորից հող լցնել և հավասարեցնել։

### ՍԱԾԻԼԱՆՈՑՆԵՐԻ ԱՅԼ ՎՆԱՍՏԱՌՈՒՆԵՐ

Սածիլանոցներում պատահում են նաև ուրիշ վնասատուներ, վորոնք համեմատաբար շատ քիչ կամ անշան վնասներ են հասցնում։ Այդ վնասատուներից ե մուկը, վոր հողը քանդելով սածիլներն արմատահան ե անում, վորից և սածիլները փչանում են։ Մկների գեմ կարելի յե պայքարել նրանց վորսալով կամ դրավշանյութով, ինչպես այդ արվում ե արջուկի դեմ պայքարելիս։ Հաճախ սածիլանոցներում լինում են նաև հողային լվեր, վորոնք, սակայն, այնքան ել մեծ վնաս չեն հասցնում սածիլանոցներին։ Դրանց դեմ պայքարելու համար պետք ե սածիլանոցին թունավոր հեղուկ սրսկել։ սրսկման համար կարելի յե գործադրել նույն հեղուկը, վորը գործադրվում ե ազըռտիսի դեմ։ Ազըռտիսի թրթուրը հաճախ սածիլանոցներին մեծ վնաս ե հասցնում։ Ազըռտիսի թրթուրի դեմ պայքարելու համար վերցնում են 4 կիլոգրամ կարտոֆիլ և մանր կտրատում ու թեթև յեփում, ապա վրան ջուր են լցում, վորից հետո դրա վրա ավելացնելով 80 դրամ

վարիդյան կանաչ՝ լավ կառնում են, ապա թողնում, վոր սառչի։ Սառչելուց հետո շաղ են տալիս մարդերի մեջ և միաժամանակ սրսկում փարիզյան կանաչի լուծույթ, հետեւյալ բաղադրությամբ։ 12 լիտր ջուր, 20 դրամ փարիզյան կանաչ և 40 դրամ չհանգցրած կիր։ Սկզբում փարիզյան կանաչը հարկավոր ե բացել վոշեծ քանակությամբ ջրի մեջ, դարձնելով այն խմորանման, իսկ հետո լուծել ու բացել ջրի մեջ։ Կիրը հանգցվում և բաց ե արվում առանձին։ Ստացված կրային լուծույթը, վոր նման ե լինում կաթի, ածում են փարիզյան կանաչի լուծույթի վրա և այդպիսով սրսկման լուծույթը պատրաստ ե լինում։ Պատրաստողը պետք ե լուծույթը պատրաստելուց հետո ձեռքերը լավ լվանա, վորովհետև փարիզյան կանաչը թունավոր նյութ ե։

Հաճախ սածիլանոցներում պատահում ե կարագինա կռչված սև վորդը, վորը սածիլներին մեծ վնաս ե պատճառում։ Այս վորդի դեմ պայքարելու միակ միջոցն ե ուղղակի ձեռքով վորդը հավաքելն ու վորընչացնելը։ Պայքարի ուրիշ միջոց առայժմ չկա։

### ԾԽԱԽՈՒՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Ծխախոտն ունի մի շարք հիվանդություններ, վորոնք առաջանում են սունկերից կամ բակտերիաներից։

Ինչպես վերեւում առաջինք, սունկերի և բակտերիաների միջոցով առաջացած հիվանդությունները խիստ վարակիչ են և բարենպաստ պայմաններում նշանք մի բույսից մյուսին անցնելով տարածվում են ամբողջ դաշտում։ Սածիլանոցների հիվանդությունների մասին խոսելիս մենք ասացինք, վոր դաշտում յերեացող հիվանդությունների մեծ մասն իրեն սկիզբն առնում ե սածիլանոցներից, յերբ սածիլները դաշտ ենք փոխադրում սածիլելու համար։ Պարզ ե՝ վորպեսպի դաշտում հիվանդություններ չառաջանան, ցանքա-

բարները պետք ե մեծ ուշադրություն դարձնեն, վորպեսզի սածիլանոցներից դաշտ տեղափոխվող սածիլները միանդամայն առողջ լինեն: Վոչ մի դեպքում չեթույլատրվում հիվանդ սածիլները դաշտ փոխադրել:

Բացի վերոհիշյալ վարակիչ հիվանդություններից, կան նաև վոչ վարակիչ հիվանդություններ, վորոնք առաջանում են հողի և կլիմայական աննպաստ պայմանների հետևանքով:

Այժմ կանգ առնենք այն հիվանդությունների վրա, վորոնք առաջանում են ծխախոտի դաշտերում:

### ԱՐՄԱՏԱՓՏԱԽՏ (ԿՈՐՆԵՎԱՅՑԱ. ԳՆԻԼ.)

Այս հիվանդությունը սնկային հիվանդություն է: Սունկերը զարդանալով բույսի արմատի վրա՝ փակցնում և սեվացնում են նրան: Ինչպես ասացինք, այս հիվանդությունն սկիզբ է առնում սածիլանոցներում, վորտեղից և տեղափոխվում է ծխախոտի դաշտը:

Հիվանդությունը դաշտում առաջանում է սածիլը տնկերտց հետո, բույսի աճման շրջանում: Յեթե սածիլը հիվանդ է, ապա դաշտում նրա աճեցողությունը չատ դանդաղ է ընթանում, տերեների վրա յերկում են սպիտակավուն բծեր և ամբողջ բույսը թառամում է ու կուչ գալիս: Հիվանդ բույսի արմատները փառում ու սեանում են, իսկ արմատի փայտանյութը կարմրավուն դույն է ստանում: Այս հիվանդությունը համեմատաբար մեծ վնաս է հասցնում ծանր կավային հողերում աճող և մշակվող ծխախոտին, իսկ թեթև և փխրուն հողերում համեմատաբար քիչ վնաս է հասցնում, միայն թե ծխախոտն ուշ է հասունանում: Հիվանդության առաջն առներու համար պետք է սածիլները դաշտ փոխադրելիս մանրազնին ջոկել, ընտրել և սեացած ու փչացած արմատ ունեցող սածիլները վոչընչացնել, դաշտ չփոխադրել, իսկ դաշտում հայտաբերված հիվանդ բույսերը հանել և դաշտից հեռու վոչչացնել:

### Ա. Լ. Բ. Յ Ա Զ


Այս հիվանդությունը լինում է ինչպես ծխախոտի, այնպես ել ուրիշ բույսերի վրա: Ալրացող կամ քյուլ կոչված հիվանդությունը խիստ վարակիչ է և նաև հիվանդ տերեւից անցնում է առողջին և մի բույսից մյուսին:

Այս հիվանդության նշանները հետևյալն են. ծխախոտի տերեների վրա (սկզբնական շրջանում ներքենի) յերեւմ է սպիտակավուն փոշիանման նստվածք: Այս նստվածքը հիվանդության սկզբի որերին քիչ է լինում, բայց կամաց-կամաց զարգանալով՝ ծխախոտի տերեն ամբողջովին ծածկում է այդ փոշիանման նստվածքով, վորը նմանում է ալյուրի, վորից և այդ անունն է ստացել: Այս հիվանդությունն առաջացնում է «երիզիֆե» կոչված ուռնկը, վորն անցնելով տերեների թաղանթների մեջ՝ շարունակում է ապրել այնտեղ: Հետազայռում սունկն իր ճյուղավորության միջոցով ավելի խորն է թափանցում տերեւի բջիջների մեջ և գորշացնում է տերեներն ու մեղցնում բջիջները:

Ալրացողով հիվանդ տերեները չորացման ժամանակ փշրվում են և առհասարակ պետք է ասել, վոր նրանք պիտանի չեն արտադրության համար: Այս հիվանդության զարգացմանը և ուժեղ տարածմանը նըսպասում են խոնավ տաք յեղանակը, չափից դուրս խոնավ հողը, խիտ սածիլված դաշտերը, վոչ քամի յեղանակը, ստվերու և անտառամերձ հողամասերը և այլն:

Պայքարի միջոցները—հիվանդության առաջն առանելու համար հիվանդացած տերեները դաշտից պետք է հավաքել և այրել: Վոչ մի դեպքում չի թույլատրվում հիվանդ տերեները դաշտում թափել: Յեթե ծխախոտի ներքեի տերեների վրա այդ նշանները յերեւմ են, անմիջապես պետք է այդ տերեները հավաքել առանձին խնամքով, վորպեսզի վերեւի առողջ տերեներն ապահովվեն. վարակված տերեւ չորացվում է առանձին: Զրգի

Հողամասերում ավելորդ ջուր չտալ: Բնդհանրապետ  
պետք ե ջրել կամ վաղ առավոտները, կամ թե ուշ



Նկ. 6.

Ալրացողով հիվանդացած տերե

յերեկոները: Պետք ե իր ժամանակին և առանց հետաձգելու կատարել ծխախոտի ծաղկահատումը և բճատումը, բացի այդ, բերքի քանակն ու վարակը պահպանելու համար անհրաժեշտ ե վարակված զաշտի բերքահավաքն արագացնել: Ծխախոտի հողամասերին մոտիկ չպետք ե ցանել վարունդ, դղում և առհասարակ

բանջարանոցային կուլտուրաներ: Ծխախոտի դաշտի քաղհանը և մոլախոտի հեռացումը պետք ե կատարել իր ժամանակին, այլապես անխուսափելի յե այս հիվանդությունը:

### ՄՈԶԱՅԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ


Մոզայիկ հիվանդությունը նույնպես վարակիչ է: Այս հիվանդությունը մեծ մասամբ առաջանում է ուշ սածիլված դաշտերում, ամառվա վերջին ամիսներին: Այս հիվանդությունը հայտնի յե լինում միայն սածիլվանկելուց յերեք շաբաթ հետո: Այս հիվանդությունը վոչ շատ հաճախ պատահում ե նաև ծխախոտի սածիլանցներում:

Մոզայիկ հիվանդությունն այնքան մեծ վնասներ չի հասցնում ծխախոտին այն պատճառով, վոր նա առաջանում ե ամառվա վերջին ամիսներին, այսինքն՝ այն ժամանակ, յերբ ծխախոտի բույսը բավականին դարպացած ե լինում և ուժեղ պարզ ե, վոր այս դեպքում հիվանդությունը մեծ վնաս հասցնել չի կարող:

Հիվանդությունը յերեսում ե հետեւյալ նշաններից. մոզայիկ հիվանդությամբ վարակված տերենների գույնը լինում ե բաց-կանաչ կամ դեղնավուն բծերով, այնինչ նորմալ տերենների գույնը լինում ե մաքուր կանաչ, առանց բծերի: Հիվանդ տերեւի վրայի բծերը հետզհետե միանալով կազմում են մի մեծ մոզայիկ նկար, իսկ տերեւի կանաչ և հիմնական գույնը մնում ե միայն տերեւի գլխավոր զղի ուղղությամբ: Այս հիվանդությամբ վարակված տերենները լինում են անպետքանում: Վարակված տերենները լինում են անորմալ ձերի, իսկ տերենների վերին յերեսին ուսուցքներ են լինում:

Այս հիվանդությունն ավելի շատ դարպանում, և տարածվում ե մատաղ տերենների և բծերի վրա: Մոզայիկ հիվանդությունը տարածվում ե հիվանդ տերենների հյութով: Այս հյութի մեջ մինչև այժմ դեռ

Ք հայտնաբերվել վո՛չ բակտերիա, վո՛չ սունկ: Հիվանդությունը սերմերով չի տարածվում:



Ն. 7.


Մողայիկ հիվանդությամբ վարակված տերևներ

Հիվանդության առաջն առնելու համար պետք է սածիւանոցները պատրաստել ծխախոտի չորանոցներից հեռու, շրջանակներն ու ամբողջ ջերմոցային գործիքները պետք ե պահել առանձին շենքում, բայց վոչ ծխախոտի չորանոցում: Բերքահավաքից անմիջապես հետո բույսի ցողունները և այլ մնացորդները պետք ե այրել: Մողայիկ հիվանդությամբ վարակված տերևները լինում են վատորակ և մեջները պարունակում են ավելորդ խոնավություն, վորը յեռյակների կամ շրջանակների վրա հակավորման ժամանակ և հակավորումից հետո պահեստում առաջացնում ե աննորմալ խռնավություն ու սկսում է բորբոսնել՝ արձակելով անախորժ գրգռիչ հոտ: Մողայիկ հիվանդությամբ վարակված ծխախոտի տերևներն առանց խառնուրդի ձիսելու համար անպետք են.

## Շ Ո Ւ Ր Գ Ա Լ

Շուռզալը մի հիվանդություն ե, վորը փոխում է տերևների արտաքին ձեր. հիվանդուտ տերևները ձևափոխվում ու հեշտությամբ տարրերվում են նորմալ տերևներից: Այս հիվանդությունը հաճախ սկսվում է ծխախոտի բույսի միջին մասի տերևներից, վորոնք ըստ լայնության այլևս աճելու հնարավորություն չեն ունենում: Այս պատճառով տերևները յերկարում են և ընդունում նշտարի ձեւ: Բացի սրանից, տերևներն սկըզբում դռւնատվում են, ապա կամաց-կամաց դեղնում: Այս հիվանդությունը միանդամ ընդմիշտ վերջ չի դնում բույսի կյանքին, բույսն ապրում է մինչև իր աճեցողության վերջը, բայց հիվանդ տերևներն արտադրության համար անպետքանում են, ծխելու ժամանակ ունենում են յուրահատուկ տհաճ հոտ ու համ:

Դեռ մինչև այսոր շուռզալ հիվանդության պատճառը գիտությունը չի պարզել: Միայն հայտնի յէ, վոր այս հիվանդությունը վարկիչ չե: Շուռզալ հիվանդությունը հաճախ պատահում է թեթեվ, փոշիացած աղքատ հողերում, իսկ ընդհանրապես նա լինում է ամեն տեղ: Այս հիվանդությունն սկսում է ուժեղանալ այն ժամանակ, յերբ վերոհիշյալ հողերը չափից դուրս ջրում են կամ հաճախակի ուժեղ անձրեներ են լինում: Պարզ է, վոր անձրեներից և չափից դուրս չափ ջրերուց հողը պնդանում է, իստում ե, վորպիսի հանդամանքը նպաստում է հիվանդության զարգացմանը: Հիվանդության նշաններն են—սկզբնական շրջանում բույսի աճեցողությունը դանդաղում է, տերևները դեղնում են, ծարվում գեպի ներքեւ, դառնում փխրուն, հեշտությամբ կոտրվում են՝ անդամ ձեռք տալուց: Տերևի ձեւը միանկամայն փոխվում է՝ նայած հիվանդության աստիճանին: Հաճախ շուռզալով վարակված տերևներն այնքան են նեղանում, վոր մնում է միայն տերևների գլուխոր ջեղը՝ չափ նեղ սկսւածեղային մակերեսով:



Նկ. 8.

Շուռադալ հիվանդությամբ վարակված տերե-

Այս հիվանդությունը մեծ վնասներ է հասցնում թե ծխախոտի բերքատվությանը և թե վորակին:

Պայքարի միջոցները,—

Ուժեղ անձրևներից և ջրելուց հետո հողն անպայմանորեն պետք է փխրեցնել: Բացի սրանից, պետք են հողը մտցնել թե որգանական և թե քիմիական պարատանյութեր, վորոնք վորոշ չափով խոչընդուռ են հանդիսանում հիվանդության զարգացմանը:

## Զ Ե Զ Ո Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն

Այս հիվանդությունն առաջացնում են պարագիտունները: Սրանք տերեւի վափուկ մասի վրա առաջացնում են բազմազան ձեռքի (կլոր, անկյունավոր և այլ) դարչնագույն բծեր, վորոնք հետո սպիտականում են: Այս հիվանդությունը կոչվում է սպիտակ բծավորություն, վորը նշանակալից չափով գցում է ծխախոտի հումուցիթի արժեքը: Այս հիվանդությունը զարգանալիս տերեւները հաճախ չորանում են և թափվում: Հիվանդությունը տարածվում է արագ թափով: Սպիտակ բծավորություն հիվանդության պատճառները հետևյալներն են. 1) անձրևային յեղանակներին հաջորդող խիստ յեղանակները, 2) Մննդարար նյութերի պակասությունը հողի մեջ, 3) բույսերի նորմալ սննդառության խանդարումը և այլն:

Բակտերիային չեստուք-յուն. — Այս հիվանդությունն առաջանում է բակտերիաներից, վորոնք ասթրելով տերեւի հյուսվածքների մեջ՝ արագորեն զարգանում և բազմանում են, տերեւների վրա առաջացնելով դարչնագույն խիտ բծավորություն: Անձրևային խոնավի և քամի յեղանակներին այս հիվանդությունը տարածվում է շատ արագ և մեծ վնասներ են պատճառում: Այս հիվանդությունն իր պատճառած վնասներով ամենավանդավորներից են վարակիչ հիվանդությունների շարքն են դասվում: Այս հիվանդություն-



Նկ. 9.

Չեչոստությամբ վարակված տերեկ

նը լինում է ինչպես ծխախոտի դաշտում, այնպես ել սածիլանոցներում:

Չեչոտություն հիվանդության զարդացմանը նը-պատում է նաև հողի և ողի ավելորդ խոնավությունը: Ծխախոտի այն դաշտերը, վորոնք քիչ թե շատ վարակված են չեչոտություն հիվանդությամբ, քաղցանը, բուկլիցը, ծաղկահատումը և բճառումը չը-պետք է կատարել յերբ բույսը թաց է, վորպեսզի վա-րուկը չտարածվի: Հիվանդ տերեները հեշտությամբ վարակում են առողջներին ձեռքի, հաղուստի, գոր-ծիքներին և այլ իրերի շփման միջոցով, ուստի պետք է ձեռքերն ու գործիքները լվանալ պղնձարջասպի լու-ծույթով, վոր պետք է պատրաստել հետեյալ հարա-բերությամբ՝ 300 գրամ պղնձարջասպ 12 լիտր ջրին: Չեչոտությունն ավելի մեծ վնասներ է հասցնում ուշ սածիլված ծխախոտին, այս պատճառով ծխախոտի սածիլումը չպետք է ուշացնել: Չեչոտություն հի-վանդությունը կանխելու համար պետք է կատարել հետեյալը. նախքան ծխախոտի սերմը ցանելը պետք է այդ սերմն ախտահանել: Պետք է ախտահանել նաև սածիլանոցները, նրանց համար պատրաստված նյու-թերը (բովիչներով) և բոլոր գործիքները (Փորմա-լինով): Բացի այս հիվանդություններից, կան նաև ծխախոտի մի շարք այլ հիվանդություններ, վորոնք ուսումնասիրված չեն, այդ պատճառով ել սույն գըր-քույկում նրանց վրա կանդ չենք առնում:

### Մ Ո Ն Թ Ա Բ

Մոնթար հիվանդությունն այն է, վոր ծխախոտի տերեները մինչ հասունանալը դառնում են բաց զույնի զեղնում և կոպտանում են: Այս հիվանդության ժամա-նակ ծխախոտի ծաղիկների զարդացումը դադարում է, իսկ յեղած ծաղիկների ձեւն աննորմալանում եւ ծխախոտի բճերը չեն զարդանում: Մոնթարով հի-

վանդ տերևները չորանալուց հետո իրենց մեջ չափից  
ավելի խոնավություն են ընդունում, վորի պատճառ-  
ով հետագա մշակման համար անպետքանում են: Մոնթարով հիվանդ տերևները յենթակա չեն հակա-  
վորման, քանի վոր նրանք խոնավության միջոցով  
կարող են փշացնել նսե հակի մեջ յեղած առողջ տե-  
րեվները: Մոնթարով հիվանդ տերևների վորակը  
միանդամայն ցածր ե լինում և, ինչպես թելերով հա-  
կավորման ժամանակ, այնպես ել ծխախոտի փնջավոր-  
ման ժամանկ պետք ե հիվանդ տերևները ջոկել ու  
առանձին մշակել: Մոնթար հիվանդության դեմ պայ-  
քարի միջոցները հայտնի չեն, քանի վոր այդ հիվան-  
դությունն առայժմս լրիվ չի ուսումնասիրված:

Մի քանի խոսք բնության առաջացրած վնասակար  
յերեւութների մասին:

Ծխախոտագործության մեջ մեխանիկական վնաս-  
վածքները նույնպես մեծ վնասներ են հասցնում թե  
հումութի բերքատվությանը և թե նրա վորակին: Այս  
վնասներն առաջանում են բնության վնասակար  
յերեւութներից, վորոնք, պետք ե ասել, տեղի յեն ու-  
նենում վոչ այնքան հաճախ:

1. Կարկուտ.— Բնության պատճառած վնասների  
մեջ ավելի զգալի յե կարկուտի, քան քամիների, հե-  
ղեղումների, ցրտահարության և այլնի վնասները:

Կարկուտը կարող ե մի քանի վայրկյանում փչաց-  
նել ահագին տարածությամբ ցանքեր, վորոշ զեպքե-  
րում ամբողջ ցանքը: Կարկուտը ծակծկում, պատըռ-  
տում և ծխախոտի տերևները և իջեցնում նրա ապրան-  
քային արժեքը, մանավանդ, յերք կարկուտահարությու-  
նը լինում է ծխախոտի հասունացման շրջանում, վոր-  
պիսի զեպքում հնարավոր չի լինում բերք վերցնել: Յերք կարկուտը խփում է ծաղիկները դեռ չբացված  
ժամանակ, հնարավոր ե վորոշ քանակությամբ բերք  
ստանալ, ձեռք առնելով հետեւյալ միջոցներ.

- 1) Հեռացնել բոլոր վնասաված տերևները:
- 2) Ցողունի վերեի մասը կտրել այնպես, վոր պահպան-

վի մի քանի աչքը և տանել համապատասխան խնամք  
(չըրել, քաղհանել, բուկ լցնել և ուժեղացնել հետազա-  
ժակությունը. պահանջի գեպքում կարելի յե մտցնել  
հանքային պարարտանյութ քիչ քանակով):

Փորձերը ցույց են տվել, վոր վերոհիշյալ միջո-  
ցառումները գործադրելով հնարավոր ե նոր աճած  
ճյուղերից բերք ստանալ, վոր թեև ավելի ցածր վո-  
րակի յե լինում, սակայն հիմնական աշխատանքների  
վրա դրված ծախքերն արդարացնում ե:

### ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Ցրտահարությունից գլխավորապես վնասվում են  
ծխախոտի այն դաշտերը, վորոնք ուշ են տնկված և  
տվյալ վայրում վաղահաս ցրտեր են լինում:

Ցրտահարությունից ուժեղ չափով վնասված տե-  
րեվների վորակական արժեքը ընկնում ե և արտա-  
դրության մեջ հանդես է գալիս վորպես զագել: Ընդ-  
հանրապես ցրտահարության են յենթարկվում ծխա-  
խոտի լավորակ քաղերը, այսինքն՝ վերին մասի տե-  
րեվները (զորուկ —զորուկալթի): Ցրտահարված տե-  
րեվները կորցնում են իրենց ապրանքայնությունը,  
լինում են թեթև և կոշտ, գույնը գորշանում է և տե-  
րեվը կորցնում է ծխելու համար արժեքավոր բոլոր  
հատկությունները: Ցրտահարված տերևների վորա-  
կային և քանակային ցուցանիներն ընկնում են, դառ-  
նում են զագել, վոր, ըստ ստանդարտի, մթերման  
յենթակա չե:

Ծխախոտը ցրտահարությունից ապահովելու հա-  
մար պետք ե ձեռք առնել հետեւյալ միջոցները—Մածի-  
լումը կատարել իր ժամանակին, առանց ուշացնելու,  
հաշվի առնել տվյալ վայրի կլիմայական յուրահատ-  
կությունն ու արագացնել բերքահավաքի ընթացքը,  
ծաղկահատումն ու բաւտումները կատարել արագ և  
բերքի հասունացման նախավերջին շրջանում դանդա-  
ղեցնել ջրելը:



Նկ. 10.  
Ցրտահարված տերելիներ

### Գ Ա Մ Ի Ն

Յերբ ողը կանգնած է լինում և տոթ է, ծխախոտը թառամում է: Պարզ է, վոր ողափոխության Համար թեթև և զովացնող քամին, անհրաժեշտ է, իսկ ինչ վերաբերում է ուժեղ քամիներին և փոթորիկներին, առաջարկ պետք է ասել, վոր նրանք մեծ վնասներ են հասցնում ծխախոտին, կոտրատում, ալատառոտում, ծակծկվում են տերելիները, վորի համար հայտնի գույցանիշներին:

Թի վորակն ընկնում է: Յերբ քամիները լինում են յերկարատև անձրևներից հետո, այդ դեպքում ավելության խոնավությունից ծխախոտն սկսում է «այրվել» և չորանալ: Այստեղից պարզվում է, վոր ուժեղ քամիները մեծ վնաս են հասցնում ծխախոտի վորակային և քանակային ցուցանիշներին:

### ՈՒԺԵՂ ՑԵՎ ՀՈՐԴ ԱՆՁՐԵՎՆԵՐ

Հորդ անձրևները, ինչպես և չափից ավելի ջրելը, ծխախոտին վնասում են, քանի վոր ավելության դեպքում ծխախոտի բռւյալ, ինչպես և տերելիները, փարթամանում, կոշտանում են, վորից նըրանց վորակն ընկնում է: Յերբ անձրևները տեղում են ծխախոտի հասունացման շրջանում, հասունացումը դանդաղանում է և կարող է ընկնել ցրտահարության տակ: Ուժեղ անձրևների և ջրհեղեղների ժամանակ թեք հողամասերում սածիլված ծխախոտը յենթակայել լինում նաև հեղեղման, արմատահանման վտանգին: Այդպիսի հողամասերում պետք է առուներ անցկացնել, վորպեսզի կարելի լինի ցանքերը պաշտպանել հեղումներից:

### Ց Ե Ր Ա Շ

Ինչպես գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների այնպես ել ծխախոտի բերքատվության ցուցանիշների վրա մեծ ազդեցություն է թողնում յերաշտը: Փորձերը ցույց են տվել, վոր շատ սածիլված դաշտերը յերաշտի նկատմամբ ձեռք են բերում լրավ դիմացկունություն և յերաշտի պատճառած վնասը քիչ է լինում: Այս իսկ պատճառով յերաշտի դեմ պայքարելու ամենալավ միջոցը համարվում է վաղ սածիլումը: Բացի այդ, մեծ նշանակություն ունի նաև ծխախոտի դաշտի լով մշակումը (քաղհանը, հողի վերնաշերտի փխրեցումը, մոլախոտերից մաքրելը և այլն): Յերաշտը

Պրդի հողամասերում այնքան ել բացասական ազդեցություն չի թողնում, յեթե դաշտը լրիվ ապահովված է ջրով:

### ԾԽԱԽՈՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Ծխախոտագործության հիմնական նպատակն ե՝ բարձրացնել ծխախոտի հումույթի վորակային և քանակային ցուցանիշները: Այս խնդիրն իր գրական լուծումը չի ստանա, յեթե անհրաժեշտ պայքար չմղվի այն վնասատուների դեմ, վորոնք մեծ վնասներ են հասցնում ծխախոտին հենց դաշտում սածիլելու ըսկը զրբնական որերից: Ամեն տարի վնասատուների կողմից ծխախոտին հասցրած վնասները հասնում են միլիոնների: Բերքի վորակն ու քանակը իջեցնող վնասատուների շարքում կան ինչպես կենդանական աշխարհին պատկանող ներկայացուցիչներ, այնպես ել բուսական աշխարհի ներկայացուցիչներ: Յեթե հաշվի չառնենք խլուրդը, ապա կարելի յե ասել, վոր մնացած կենդանական աշխարհին պատկանող վնասատուները միջատներն են: Այս վնասատուներից վորոնք վնասում են ծխախոտի թե փոքր և թե հասունացած բույսերին, կրծելով նրանց: Վորմանք փչացնում են ցողունները, վորմանք ուտում և վոչնչացնում են տերեվները, յերեմն ել սերմերի տուփերը, և վերջապես բեզները, յերեմն ել սերմերի տուփերը, և վերջապես գոյություն ունեն հյութ ծծող միջատներ: Վնասատուների դեմ պայքար մղելու համար անհրաժեշտ պարզել, թե ամեն մի շրջանում ինչպիսի վնասատուներ են լինում, նրանց յերեւալու ժամանակը, պատճառում վնասները և պայքարի մեթոդները: Պարզելու համար թե տարբեր վնասատուներն ինչ վնասներ են պատճառում ծխախոտին, կանդ առնենք դրանց վրա առանձին-առանձին:

### ԱԳՐՈՏԻՄ (ԱՇՆԱՆԱՅԻՆ ՎՈՐԴ)

Վնասատուների շարքում ագրոտիսն ամենաշատ վնասներն ե հասցնում ծխախոտին: Ագրոտիսը կամ աշնանային վորդը գիշերային փոքրիկ թիթեռ է: Նրա առջեկ թևերը դորշ մոխրագույն են, կամ մուգ-դորշ գույնի, յերկու ընդմիջող ալիքավոր զծերով և բողբոջային կլոր ու սեպաձև բծերով: Հետեւ թևերը բաց գույնի յեն, կարելի յե ասել համարյա սպիտակ են: Դարնանը թիթեռներն սկսում են թռչկոտել դես ու դեն և զուգավորումից հետո սկսում են ձու զնել: Թիթեռներն իրենց ձվերը դնում են գլխավորապես մոլախոտերի վրա: Սրանց ձվերը շատ մանր են, դնդաձև և թեթև: Յերբեմն նրանք իրենց ձվերը դնում են կուլտուրական—տեխնիկական բույսերի վրա: Մի թիթեռն իր ամբողջ կյանքի ընթացքում մոտավորապես 400-ից 800 ձու յե դնում, վորոնցից 5-12 որվա ընթացքում զուրս են գալիս թրթուրներ:

Ակզենական շրջանում այդ թրթուրներն ապրում են այստեղ, վորտեղ յեղել են ձվիկները, այսինքն բույսի վրա և սնվում են տվյալ բույսի տերևներով, վորոնց վրա առաջանում են ծակոտիներ: Մեծահասակ թրթուրները կերակրվում են միայն գիշերները, իսկ յերեկոն անց են կացնում հողի մեջ:



Նկ. 11.

Ագրոտիսի վորդն ու թրթուրը

Մոլախոտերից թրթուրներն անցնում են կուլտուրական բույսերի վրա, վորոնց թվում և ծխախոտի

վրա և մեծ վնասներ են պատճառում: Նրանք դատշում նոր տնկված սածիներն ուսում, կրծում են սկզբում ներքեւ մասը, իսկ հետո տերեները և ցողունի մասը: Այն տարիներին, յերբ ագրոտիսը մասսայական չափով ե յերեւմ, ծխախոտի կրած վնասն այնքան մեծ ե լինում, վոր ծխախոտագործներն ստիպված են լինում նույն դաշտը 2-3 անգամ սածիլել: Թրթուրների կյանքը տեղում ե 30-40 որ: Չափահաս և իրենց զարգացումը ավարտած թրթուրները 10-ից 30 սանտիմետր խորությամբ հողի մեջ ըռւն են դնում, վորտեղ հետագյում կերպարանափոխվում և հարսնյակ են դառնում: Յերկու շաբաթից հետո այդ հարսնյակներից թիթեռներ են դուրս գալիս, վորոնք նորից իրենց ձվերը դնում են մոլախոտերի վրա և այդտեղից անցնում կուլտուրական բույսերի վրա: Մեկ տարվա ընթացքում առաջանում է թիթեռների 2-3 սերունդ: Վերջին սերնդի միջահասակ թրթուրները ձմեռում են հողի մեջ, վոչ խորը, և հարսնյակ են դառնում հաջորդ տարվա գարնանը:

Պայֆարի միջոցները.— 1. Նկատի ունենալով այն, վոր աշնանային վորդն իր ձմբերը դնում ե մոլախոտերի վրա, այն դաշտերը, վորտեղ նախատեսված ե ծխախոտ սածիլել, անհրաժեշտ ե սածիլերուց մոտավորապես 3 շաբաթ առաջ վոչնչացնել դաշտում յեղած բոլոր մոլախոտերը: Մոլախոտերը պետք ե վոչնչացնել վոչ միայն ցանքատեղում, այլև միջնակներում, ճանապարհներում և դաշտից դուրս:

Ագրոտիսը կարելի յե վոչնչացնել թունավոր նյութերով, վորից և պատրաստվում ե գրավչանյութը: Ճակնդեղից գրավչանյութը պատրաստելու համար 740 դրամ փարիզյան կանաչը լուծում են 12 լիտր ջրի մեջ (շաբաթ-սիրոպ պարունակող) և ստացված խառնուրդին ավելացնում են 11 կիլոգրամ մանրացրած կերի ճակնդեղ: Ճակնդեղի մանրունքներն այնպես պետք են խառնել, վոր փարիզյան կանաչի մասնիկներն անպայմանորեն կպչեն ճակնդեղի ամեն մի կտորին: Ճա-

կընդեղ չլինելու դեպքում կարելի յե վերցնել բամբակե քուապ, վորը պատրաստվում ե հետեւյալ կերպ: մեկ կիլոգրամ փարիզյան կանաչը լուծել 20 լիտր ջրի մեջ և այդ լուծույթն անընդհատ խառնելով՝ վրան ավելացնել 50 կիլոգրամ այլուրի թեփ կամ մանրածրամբակի քուապ: Պատրաստված գրավչանյութը շաղեն տալիս դաշտում և այդպիսով վոչնչացնում թթուրներին:

2. Յեթե ծխախոտի դաշտին մոտ կան մոլախոտեր և նրանց վրա թրթուրներ են յերեսում, ապա վարակված մոլախոտերը պետք ե սրսկել փարիզյան կանաչով և հանգցրած կրի խառնուրդով, հետեւյալ կերպ: մեկ մաս փարիզյան կանաչին պետք ե խառնել 5 մաս հանգած կիր և դրանով սրսկել մոլախոտերը: Մրսկված վայրում արգելվում ե արածացնել անսառններ, վորոնք կարող են թունավորվել:

3. Սածիլված ծխախոտը թրթուրներից վնասված լինելու դեպքում պետք ե սրսկել փարիզյան կանաչի և չոր փոշենման հանգած կրի խառնուրդ՝ հետեւյալ հարաբերությամբ— մեկ մաս փարիզյան կանաչին վերցնել 10 մաս կիր:

4. Թրթուրներին կարելի յե վոչնչացնել նաև հետեւյալ կերպ— վերցնում են 16 կիլոգրամ ալյուրի թեփ, 600 գրամ փարիզյան կանաչ, մեկ կիլոգրամ դոչար և 12 դույլ ջուր: Դոշաբը լցնում են ջրի մեջ և հետո կառնում են փարիզյան կանաչը: Այս խառնուրդն ածում են թեփի վրա, լավ խառնում և շաղ են տալիս դաշտում, վորից վոչնչանում են թրթուրները: Փարիզյան կանաչը թունավոր նյութ ե և նրա հետ պետք ե շատ զգուշ վարվել:

#### ԼՈՐԱՁԵՎ ՎՈՐԴ (ՊՐՈՎՈԼՈԶՆԻՑ ԶԵՐՎ)

Ծխախոտի դաշտերում հաճախ պատահում ե բարակ, յերկու սանտիմետր յերկարությամբ սև վորդ, վորը մեծ վնասներ և հասցնում ծխախոտին, այդ վոր-

գը կոչվում ե լարածե վորդ. ոռւսերեն՝ պրովոլոչնի չերվ։ Այս վորդերն ոկղում ուսում են ծխախոտի արմատի վերևի մասը, ապա աստիճանաբար բարձրանում են բույսի ցողունի վրա և կրծում, ուսում են ցողունի միջին մասը և այդպիսով վերջ դնում բույսի կյանքին։ Հողի մեջ նրանք իրենց գոյությունը կարող են պահպանել 3-4 տարի։ Դժբախտաբար սրանց դեմ կովելու համար դեռ կոնկրետ միջոցներ չեն մըշակված, բայց գոյություն ունի մի ձև, վորը միանդամայն լավ արդյունք ե տալիս։ Այդ հետեւյալն ե։ Ծխախոտի գաշտում խառը ցանում են յեգիպտացորեն ու արևածաղիկ, մոտավորապես մեկ շաբաթ սածիլումից առաջ, վորդերն սկսում են յեգիպտացորենին ու արևելքածաղիկն ուտել, իսկ ծխախոտն այդ ժամանակաշիջոցում աճում, ամրանում ե, վորից հետո յենթակա չի մնում վորդերի պատճառած վնասին։ Յերբ վրա յե հասնում ծխախոտի 2-րդ քաղցանը, պետք ե յեգիպտացորենը վոչնչացնել, վորակեսզի ծխախոտը լավ աճի։

## ԱՎԱՋՈՒՏԱՅԻՆ ՄԵԴԱՅԱԿ ԿԱՄ ԿԵՂԾ ԼԱՐՎՈՐԴ

Այս սեամորթ բզեզի թրթուրն իր արտաքին տեսքով նմանում ե լարավորդին, և հենց այդ պատճառով սրան անվանում են կեղծ լարվորդ։

Ծխախոտի դաշտերում այս վնասատուն հաճախ ե յերեսում։ Ավազուտային Մեղլյակը 7 միլիմետր յերկարությամբ մի փոքրիկ բղեղ ե։ Բզեզները յերեսում են վաղ դարնանը։ Սկզբնական շրջանում, տաք որերին, նրանց կարելի յե նկատել բաց և լուսավորված վայրերում, վորոնք զուրկ են բուսականությունից։ Հետագայում բզեզներն ուժեղ կերպով վնասում են ծխախոտի տերեները։ Զուգավորումից հետո եղերը հողում ձվեր են դնում։ Ձվերից զուրս յեկած թրթուրները սնվում են արմատներով կամ հողի տակ մնացած զանազան բույսերի, վորոնց թվում ե ծխախոտի բույսերի ցողունի մասերով։ Թրթուրները ծխա-

խոտի ցողունի կեղեր կրծուամ են, վորի հետևանքով ծխախոտի աճը դանդաղում ե, ապա ցողունը չորսանում։ Թրթուրների աճելն ու կերակրվելը տևում է մոտ 50 որ։ Այս թրթուրները հարսնյակ են դառնում հողի մեջ և 2 շաբաթից հետո հարսնյակներից բզեզներ են զուրս գալիս։ Բզեզները ձմեռում են և հաջորդ դարնանը ձու դնում։

Պայքարի միջոցները։ Ավազուտային մեղլյակի դեմ պայքարը, վորքան հնարավոր ե, չուտ պետք ե սկսել, հենց վոր բզեզները նկատելի չափով յերեան։ Բզեզների վոչնչացման համար գործ են ածում թեփից պատրաստված թունավոր գրավչանյութ։ Մեկ կիլոդրամ վարիդյան կանաչը լուծում են 30 լիտր ջրի մեջ և ստացված խառնուրդն անընդհատ խառնելով վրան 40 կիլոդրամ թեփ են ավելացնում։

Գրավչանյութը դաշտում զնում են կույտերի ձևով ու խոտերի կամ հողի կնձիկներով ծածկում։ Մեկ հեկտարին անհրաժեշտ է մոտավորապես 40 կիլոդրամ թեփ։ Այդ գրավչանյութն ոգտագործվում է նաև թրթուրների վոչնչացման համար։ Այդ նպատակով գրավչանյութը մեկուկես—յերկու սանտիմետր խորությամբ զնում են ակոսների մեջ ու հողով ծածկում։

## ԴԱՂՁ (ՊՈՎԻԼԻԿԱՄ.)

Դաղձը միամյա, պարագիտ, ծաղկող բույս ե՝ բարակ, փաթաթվող ցողուններով։ Դաղձը սնվում է բույսերի, ինչպես և ծխախոտի, պատրաստի սննդանյութերով։ Մրա ծաղիկները վարդագույն են, սերմերը՝ գեղնադարչնագույն և կաշխաչի մեծությամբ։ Այս պարագիտ բույսը զուրկ է սեփական արմատային սիստեմից։ այդ պատճառով նա, չկարողանալով ոգտվել հողից, սնվում է ուրիշի հաշվին։ Հենց այս պատճառով ել այս պարագիտ բույսն ոժուված ե հատուուկ ծծիչներով, վորոնց միջոցով կաչում է ուրիշ

բույսերի և նրանցից ծծում իր գոյությանն անհրաժեշտ սննդանյութերը:

Դաղձը պատահում է ինչպես ծխախոտի ցանքառեղերում, այնպես ել սածիլանոցներում։ Նա փաթաթվելով ծխախոտի բույսին՝ սնվում է նրանից և,



Նկ. 13.

Դաղձը ծխախոտի վրա

բացի այդ, դժվարեցնում է թե նրա խնամքը և թե բերքահավաքի աշխատանքները։ Դաղձն ավելի ուժեղ

աճեցողություն և ունենում ծխախոտի թփի միջին և վերին տերեների քաղի ժամանակ։ Դաղձից ծխախոտի տերեները թառամում են, գորշանում և ծայրերը կորանում։ Դաղձի գեմ պայքարելու համար պետք է վարակված դաշտից դաղձը հավաքել և այրել։ Բացի այդ, պետք է կիրառել կանոնավոր ցանքաշրջանառություն։ Դաղձը լինում է նաև որդանական պարարտանյութերի մեջ, ուստի սածիլանոցներին հատկացված որդանական պարարտանյութերն անպայման պետք և ախտահանել բովիչներով։

### ՃՐԱԳԱԿՈՒԾ (ԶԱՐԱԳԻԽԱԱ)

Ծխախոտի համար ամենավտանդավոր թշնամիներից մեկն ել մի ուրիշ պարագիտ բույս և, վորը կոչվում է ճրագախոտ կամ զարագիխա։ Ճրագախոտը բացդեղնավուն բույս և՝ կատամանիշակագույն ծաղիկներով։ Տերեների փոխարեն այս բույսն ունի անգույն թեփուկներ։ Ճրագախոտը զուրկ և ինչպես խոկական արմատներից, այնպես ել կանաչ տերեներից։ Նա պարագիտ բույս և և սնվում է ծխախոտի արմատների մեջ յեղած պատրաստի սննդանյութերով։ Ճրագախոտն արմատի փոխարեն ունի ծծիչներ, վորոնք ամֆրանում են ծխախոտի արմատներին և սնվում նրա հյութով։ Ճրագախոտն իր գոյությունը պահպանելով ծխախոտի հաշվին՝ աճում, զարգանում և և ծաղկելով տալիս և հազարավոր մանր սերմեր, վորոնք հեշտությամբ տարածվում են քամու միջոցով և վարակում նաև շրջապատի ծխախոտի դաշտերը։

Ճրագախոտի սերմերը չափազանց մանր են, նույնիսկ մանր են քան ծխախոտի սերմերը և դրա համար հեշտությամբ տարածվում են անդամ թույլ քամիների ժամանակ։ Ճրագախոտով վնասված ծխախոտը թուրանում է, տերեները և ցողունի վերին մասը կուանում են, և շատ անդամ ցանքը բոլորովին փչանում է, կամ



Նկ. 13.  
Ճրագախոտ ծխախոտի վրա

բերքը պակասում է, վորակը՝ վատանում։ Բացի ծըլսախոտից, ճրագախոտն աճում է արևածաղկի, յեւիպտացորենի և այլ կուլտուրաների հաշվին։

### ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ

Վնասի առաջն առնելու համար ճրագախոտը յերկալուն պես պիտք է այն պոկել, այրել, հետքը չըթողնել զաշտում։ Ծթողնել վոր ծաղկի ու սերմակալի։ Ճրագախոտով վարակված դաշտերում վարը պիտք է չատ խորը կատարել և, բացի դրանից, վարակված ծխախոտի դաշտերում հաջորդ տարին անպայմանորեն հացարույսեր ցանել (ցորեն, գարի, վարսակ և այլն), վորոնց վրա ճրագախոտը չի զարդանում։ Խիստ վարսակված դաշտերում ծխախոտը կարելի յե ցանել մեյն մի քանի տարուց հետո։ Այլ խոռօքով՝ կիրառել կանոնավոր ցանքացընառություն։


### ԾԽԱԽՈՏԻ ՏՐԻՊՍԼ

Հաճախ ծխախոտի տերևների վրա տերևների ջղերի ուղղությամբ նկատվում են սպիտակամոխրագույն և ժանդի գույնի բծեր։ Այս վնասվածքները կոչվում են փաս կամ ժանդ, վոր առաջանում ի տրիպս կոչվող փոքրիկ միջատներից, վորոնք ապրելով ծխախոտի տերևել վրա՝ ծծում են նրա հյութը տերևի ջղերի ըլջակայքում, դրա հետևանքով տերևի հյուտվածքն ստանում է մի շարք ծակոտիներ, գունատվում է և կորցնում իր մեջ յեղած պետքական նյութերը։ Փասով կամ ժանդով վարակված տերևները թեթևաքաշ են լինում և լավ չեն ծխվում։ Տրիպսն աչքով հազիվ տեսանելի միջատ է։


Զափահաններն ունենում են մեկ միլիմետր յերկարություն, բաց-ղեղին գույնի յերկու նեղ թեփկներով։ Սրանց թրթուրներն ավելի մանր են լինում և դրեթե անգույն ու անթե են։ Տրիպսը չատ արագ է

բազմանում, մեկ ամսվա ընթացքում 3 սերունդ է տալիս։ Տրիպսի զարգացման և բազմացման համար մեծ նշանակություն ունի չորային յեղանակը։ Հենց այս պատճառով ել տրիպսը մեծ վնասներ է հասցնում այն շրջաններին, վորոնք չորային յեղանակ ունեն, իսկ ավելի քիչ վնաս է հասցնում խոնավ յեղանակ ունեցող շրջաններին։ Եդ տրիպսն իր գոյության ընթացքում մինչև 100 ձու յե դնում, վորոնցից 3-ից—5 որվա ընթացքում առաջ են գալիս մանր, սպիտակավուն թըրթուրներ, վորոնք 10-17 որից հետո մեծանում և չափահաս են դառնում։ Տրիպսի բազմացումն սկսվում է գարնանից և վերջանում է մինչև ցրտերն ընկնելը, կամ ծխախոտի տերևների առաջանալուց մինչև տերեվների չորանալը։ Տրիպսը բուն դնելով ծխախոտի կանաչ տերեւի վրա՝ ծծում են նրա մեջ յեղած սննդանյութերը և առաջացնում սպիտակավուն բծեր։ Ծխախոտի տրիպսը գարնանն իր ձվերը դնում է սոխի, կարտոֆիլի կամ այս ու այն մոլախոտերի տերևների վրա։ Իսկ տրիպսի յերկրորդ սերունդը զարգանում է ծխախոտի վրա, գարնանն ու ամռանը տալիս է մոտավորպես 6 սերունդ։ Տրիպսը լինում է սածիլների վրա ևս, վորտեղից սածիլների տեղափոխման ժամանակ անցնում է ծխախոտի դաշտը։ Տրիպսը կարող է տեղափոխվել նաև մոլախոտերից։

Տրիպսի գեմ պայքարելը շատ դժվար է, քանի վոր նա ձվերը դնում է տերեւի հյուսվածքների մեջ։



Նկ. 14ա.  
Ծխախոտի տրիպսը



Նկ. 14բ.  
Տրիպսով հիվանդացած տերեւ

Թունավոր նյութերը կարող են ազդել միայն չափահանավոր նյութերը կամ եմատաբար լավ արդյունք են տալիս տրիպսի արագ զարգացմանը իսկանդարող նախալիս տրիպսի արագ զարգացմանը իսկանդարող նախալիս պլուշական միջոցները։ Վորովհետեւ տրիպսն ապրում


Ե մոլախոտերի վրա, վորից անցնում է ծխախոտին, ապա այդ վնասատվին վոչնչացնելու համար անհրաժեշտ է ցանքատեղում և նրա շրջակայքում գտնվող բոլոր մոլախոտերն արմատապես վոչնչացնել:

Բացի դրանից, ծխախոտի տերևները հավաքելուց հետո տրիպսը մնում է ծխախոտի ցողունի. վրա և հետագայում նորից տարածվում է: Այս պատճառով ծխախոտի բերքահավաքից հետո անպայման պետք է կազմակերպել ծխախոտի ցողունների հավաքելը և հեռացնել դաշտից— ավելի լավ և այրել տեղում: Վերոհիշյալ միջոցառումներով հնարավոր և լինում տրիպսը վոչնչացնել:

### ԾԽԱԽՈՏԻ ԼՎԻՃՐ (ՏԼՅԱ)

Ծխախոտի վրա ապրում է նաև փոքրիկ կենդանի, վորը կոչվում է ծխախոտի լվիճ (խոտաբույսերի վոչիլ): Վոչիլի արտաքին տեսքը մոտավորապես ձվաձեւ է, գույնը մուգ, կանաչ բծերուվ: Այս կենդանին մեծ վնասներ է հասցնում ծխախոտին, մանավանդ այն ժամանակ, յերբ նա ուժեղ կերպով բազմանում է: Ծխախոտի լվիճն ամբողջ ամառվա ընթացքում տալիս է մի քանի սերունդ, վորոնք շատ արագ տարածվում են ծխախոտի ցանքատեղերում: Վոչիլը ծխախոտին վնաս է հասցնում հետեւյալ կերպ. ծխախոտի տերևի հյութը ծծելով հյուծում է նրան, վորի պատճառով և խանդարվում է տերևի նորմալ աճեցողությունն ու հասունացումը: Ծխախոտի տերևների վրա ապրելով՝ նա իրենից արտադրում է քաղցրավուն, կպչուն մի հյութ, վորով կեղտուում է ծխախոտի տերեւ և գցում նրա վորակը: Այդ քաղցրավուն և կպչուն հյութի վրա հեշտությամբ փոշի յե նստում, բացի դրանից, այդտեղ զարգանում է հատուկ սունկ, վորը սև, ժանգանման հյութով ծածկում է տերևի յերեսը:

Լվիճով վարակված ծխախոտի տերևը չորանալուց



Նկ. 15.

Լվիճը տերեւի վրա

հետո ունենում է տհաճ համ, հոտ և ծխելու համար անպետք է լինում, ուստի և ընկնում է նրա ապրանքային արժեքը: Ուժեղ չափով լվիճով վարակված ծխախոտի ցանքերի բերքը հաճախ չի հավաքվում, վորովդ հետեւ անպետք է լինում արտադրության համար: Լվիճն ամենից շատ վնաս է հասցնում ջրովի ծխախոտին, յերբ ցանքը նորմալ չի ջրվում:

Պայքարի միջոցներ— Լվիճի դեմ պայքարելն ավելի հեշտ է քան տրիպոի դեմ, բայց պետք է այնպես անել, վոր լվիճը բոլորովին ել չերելա: Լվիճը ծխախոտի դաշտը կարող է փոխադրվել սածիլների միջոցով, կամ թե կարող է տեղափոխվել դաշտի շրջակայքում գտնվող մոլախոտերից: Պետք է լրացնալ, վոր մի քանի լվիճներ 1 ամսվա ընթացքում տյնքան են բազմանում, վոր կարող են վարակել ամբողջ դաշտը: Լվիճի դեմ պայքարելունախազգուշական միջոցները հետևյան են— սածիլանոցները և ծխախոտի սածիլացման յենթակա դաշտը պետք է միշտ մաքուր պահել, չթողնել, վոր մոլախոտեր զարգանան այնտեղ: Յերբ սածիլների վրա լվիճ է յերկում, անմիջապես պետք է նրան վանչացնել: Զրովի հողամասերի ծխախոտին չպետք է ավելորդ ջուր տալ և առհօսարակ ջրելը պետք է կատարել ըստ բույսի պահանջի: Ծխախոտի բերքահավաքից հետո լվիճը կարող է իր գոյությունը պահպանել նրա ցողունների վրա, հենց այս պատճառով ել բերքահավաքից հետո պետք է անպայման ծխախոտի ցողունները հավաքել և հեռացնել դաշտից կամ այրել տեղում, այլապես մյուս տարին այդ նույն հողամասում լվիճ կտարածվի: Լվիճի դեմ պայքարելու համար գործադրվում է սրբակման միջոցը: Սրբում կատարելու համար պատրաստվում է մի համար 1,5 կիլոգրամ ծխախոտի եքստրակտ և 1,5 կիլոգրամ կանաչ սապոն ու 100 լիտր ջուր, վորոնք խառնելով իրար՝ լուծում, ստանում են սրսկելու հեղուկը: Մեկ հեկտար տարածությունը սիստեմատիկաբար սրսկե-

լու համար պահանջվում է 68 դույլ ջուր, 12 կիլոգրամ ծխախոտի եքստրակտ և 12 կիլոգրամ կանաչ սապոն: Սրսկման համար կարելի յե գործածել նաև միայն կանաչ սապոնը՝ հետեւյալ հարաբերությամբ — 120 լիտր ջրին վերցվում է 3 կիլոգրամ կանաչ սապոն և լուծելով ջրի մեջ՝ սրսկվում: Սրբումն անպայմանը պետք է կատարել վաղ առավոտյան կամ յերեկոները: Որվա չոդ յեզանակին չի թույլատրվում սրբում կատարելը, քանի վոր ծխախոտի տերենները դրանից այրվածքներ կստանան, վորը բացասաբար կանդրագառնա ծխախոտի վորակի վրա:

### ԾԽԱԽՈՏԻ ՊԱՀԵՍՏԱՑԻՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Ծխախոտի պահեստային վնասատուներից ամենապիշավորը և տարածվածը ծխախոտի բզեզն և (տարաչչի ժուկ), վորը մեծ վնասներ է հասցնում ծխախոտին: Ծխախոտի բզեզը վնասում ինչպես Փերմենտացված, այնպես ել վոչ Փերմենտացված ծխախոտերին, նույնպես և պատրաստի գլանակներին, և այլն: Ծխախոտի արտադրությանն այս բզեզի հասցրած վնասը շատ խոշոր է: Նա տարածված է, ամեն տեղ, բայց պետք է տաել, վոր նա մասսայականություն տարածված է լիում տաք յերկրներում: Ծխախոտի բզեզի յերկարությունը հասնում է 2—4 միլիմետրի, նա ունի ովալ ձև և կարմիր-շականակագույնի յե: Բզեզը ծածկված է մանր մազուկներով: Բզեզի համար վորպես սննդանյութ կարող են ծառայել, բացի ծխախոտից, նաև ուրան, բրինձը և այլն: Ինչպես ասացինք, բզեզը ջերմասեր կենդանի յե և հենց այդ պատճառով, յերբ ջերմությունը 10°-ից ցածր է լինում, բզեզը դադարում է գործելուց, այսինքն նրա կյանքի համար անհրաժեշտ գործողություններ չեն կատարվում:

Բզեզի կյանքը տեսում է ընդամենը 20—40 որ: Նա

յերեալուն պես ծխախոտի վրա դնում ե ձվեր՝ մոտ 100 հատ։ Այդ ձեերից 6-7 որվա ընթացքում դուրս են գալիս վորդեր, վորոնք 10 որ կարող են մնալ առանց սննդի։ Նրանք ամենից առաջ վնասում են ծխախոտի տերևի հիմքի մասը։ Այս վորդերը կրծում են ծխախոտի տերևի հիմքի մասը։ Այս վորդերը կրծում են ծխախոտի տերևները և մեծ վնաս պատճառում։ Նա-



Նկ. 16.

Բզեզից վնասված տերեվ

յուծ ջերմության, խոնավության աստիճանին և սննդանյութի քանակին՝ վորդերի սննդառությունը տեսում է 25-ից 70 որ։ Տարվա ընթացքում, նայած ի-

րենց կյանքի պայմաններին ու ջերմությանը, տալիս են 3-ից—5 սերունդ։

Պայֆարի միջոցները.— Մինչև նոր բերքը պահանջուններում դասավորելը պետք է պահեստները մաքրել նախորդ տարվա ֆերմենտացված ծխախոտերից, թելի կուրտանքներից և այլ կեղտուառութուններից։ Պահեստի պատերը պետք է սպիտակացնել թարմհանդցրած կրով։ Ուժեղ կերպով վարակված պահեստները պետք է ախտահանել գազածխման միջոցով, վորի համար ոգտագործվում ե ծծումբը։

Գազածխում կատարելուց առաջ պահեստի դռները, պատուհանները և այլ անցքերը պետք է ամուր փակել, վորպեսզի ծուխը դուրս չգա։ Ծծումբը պետք է այլիք թիթեղյա բովիչներին մեջ, վորոնք պետք է դնել աղյուսների վրա։ Բովիչի տակը և նրա շրջապատում պետք է 10 սանտիմետր հաստությամբ ավագ փոել։ Յուրաքանչյուր 10 խորանարդ մետր պահեստի համար պետք է վերցնել 1,2 կիլոգրամ ծծումբ։

Պահեստն անպայմանորեն պետք է գազի ազդեցության տակ 2 որ մնա, վորպեսզի ախտահանումը լրիվ կատարվի։ Պետք է ախտահանել գատարի պահեստները, քանի վոր գազի հոտից ծխախոտը տհաճ համ է ստանում։ Այն ծխախոտի պահեստները, վորոնք ապրելու տներից շատ հեռու յեն (վոչ պակաս քան 15-20 մետր), կարելի յե ախտահանել ծծմբածխածնով։ Ծծմբածխածնը ծխախոտի վրա վնասակար ազդեցություն չի թողնում, ուստի սրանով կարելի յե ախտահանել նաև վնասված ծխախոտը։ Պահեստի բոլոր անցքերը փակելուց հետո ծծմբածխածնը պետք է լցնել բովիչի մեջ և պահեստի ամենաբարձր տեղում դնել։ Գազի ազդեցությունն արագացնելու համար տվյալների ջերմությունը պետք է 21 աստիճանից ցածր ըլից։ 10 խորանարդ մետր տարածության համար պետք է վերցնել 1 կիլոգրամ ծծմբածխածն։ Ծծմբածխածնով ախտահանումը տևում է յերկուսից-յերեք որ։ Ծծմբածխածնի հետ պետք է շատ զգուշ լինել, այս

գործածելիս չծխել, լուցկի չվառել և այլն, քանի վոր  
նա պայթուցիկ է։ Պետք է շատ զգուշ լինել և ախտա-  
հանված պահեստները վնասատուներով վարակված-  
ծիախոտ չմացնել, վորպեսզի բղեղները նրա հետը չը-  
մըտնեն, պետք է պատուհաններին դրսի կողմից խիտ  
շանց ամրացնել։

## Մ Ո Ւ Կ Բ

Սովորական ամբարի մուկը պահեստներում հակա-  
վորված ծխախոտերին յերբեմն զգալի վնաս է տա-  
լիս, մանավանդ այն չըջանում, յերբ նա ձագեր է բե-  
րում։ Մուկը հակավորված ծխախոտի տարրեր մասե-  
րում կրծելով առաջացնում է խոր փոսեր—ակոսներ՝  
յերբեմն 10 սանտիմետր խորությամբ և 10–15 սանտի-  
մետր յերկարությամբ։ Մուկը մեծ մասամբ ծխախո-  
տին վնասում է նրան չոր ժամանակ, կրծում է ու  
կտրատում հակերի կամ յեռյակների թերերը, փնջերը  
և այլպիսով մնաս պատճառում ծխախոտին։

Մկան դեմ պայքարելու համար անհրաժեշտ է,  
վոր պահեստը բենարկման որից—սկզբից մաքրվի  
բոլոր տեսակի կեղտուությունների մնացորդներից,  
վորոնց մեջ ապաստանում է մուկը, կատարել վերա-  
նորոգում և պահեստի անցքերը փակել ցեմենտով։  
Յեթե մկները արդեն մուտք են գործել պահեստ,  
նրանց վաչացնելու համար նպատակահարմար է  
գործադրել թույն—մկնդեղ, վորը պատրաստվում է  
ալյուրից՝ արևածաղկի մաքուր ձեթով, հետը խառնե-  
լով մկնդեղ՝ հետեւյալ հարարերությամբ։ 10 մաս  
մկնդեղին խառնում են 100 մաս ալյուր, շաղախում  
ջրով դարձնում կաչուն խմոր, վրան ավելացնում  
10–15 գրամ ձեթ, վորից հետո սատցված բաղադրու-  
թույնը բաժանում են մի քանի ամանի մեջ ու դնում  
պահեստի զանազան մասերում։ Պահեստում ուտելու  
ուրիշ բան չլինելու հետեւանքով մուկն ագահորեն ու-

տում է թունավորված խմորն ու կարճ ժամանակից  
հետո սատկում։

Պահեստը մաքուր պահելու համար հարկավոր է  
սատկած մկներին հավաքել և դուրսը հողի մեջ թաղել։

Թույն պատրաստելուց հետո հարկավոր է ձեռքերը  
լավ լվանալ, վորպեսզի մկնդեղի փոշին չթունավորի  
մարդկանց։ Կարելի յե ոգտվել նայե մուկ վորսող թա-  
կարգներից։

## Ճ Ն Ճ Ո Ւ Կ Ն Ե Ր

Ճնճղուկները նույնպես ծխախոտին վնաս են հասց-  
նում, յերբ նա չորացած դրությամբ հավանգներով  
կախված ե լինում չորանցներից։

Այս խակ պատճառով չորանցից պահակները պետք  
է լավ իմանան այս խնդիրը և ձեռնարկեն անհրաժեշտ  
միջոցառումներ։



1.	Սածիլների զիվանդությունները	3
2.	Ծխախոտի հիվանդությունների պատճառը	4
3.	Արմատային փտախտ	6
4.	Սածիլային ախտ	9
5.	Բակոտերային չեղոտություն	11
6.	Ողակավոր չեղոտություն	14
7.	Սածիլների վնասատուները	15
8.	Խլուրդ	17
9.	Սածիլանոցների այլ վնասատուներ	18
10.	Ծխախոտի հիվանդությունները և պայքարը նրանց դեմ	19
11.	Արմատախտախտ	20
12.	Ալբացող	21
13.	Մոզայիկ հիվանդություն	23
14.	Շուռ գալ	25
15.	Չեղոտություն	25
16.	Մոնթար	29
17.	Յրտահարությունից առաջացած վնասները	31
18.	Քամին	32
19.	Ուժեղ և հորդ անձրեներ	33
20.	Յերաշտ	33
21.	Ծխախոտի գաշտային վնասատուները	34
22.	Ագրոտիս	35
23.	Լարաձև վորդ	37
24.	Ավագուտային մեղլյակ կամ կեղծ լարվորդ	38
25.	Դաղձ	39
25.	Ճրադախոտ	41
27.	Պայքարի միջոցները	43
28.	Ծխախոտի տրիսուը	43
29.	Ծխախոտի լվիճը	46
30.	Ծխախոտի պահեստային վնասատուները	49
31.	Մուկը	52
32.	Ճնճղուկներ	53

Դատ. խմբագիր Բ. Ղալումյան  
Մասնաշ. խմբագիր՝ Գ. Ղարագյաղյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան  
Մրրագրիչ՝ Գար. Հակոբյան

Գլավլիտի լիազոր՝ Դ.—3609. Հրատ. № 4000

Պատվեր 410. Տիրաժ 1000

Թուղթ 62×94. Տպագր. 31/ $\frac{1}{2}$  մամ.

Մեկ մամ. 24,480 նշան. Հեղինակ. Զ մամ.

Համաձայն և արտադրության 23 ապրիլի 1938 թ.

Ստորագրված և տպագրության համար 25 մայիսի 1938 թ.

Գետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0293370

813

18302

ԳԻՒԸ 20 ԿՈԹ.

Вредители и  
болезни табака

Гиз Арм. ССР. Ереван, 1938